«Գրանցված է»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«14» մարտի 2015թ.
Պետական գրանցման համարը ___________
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Արդարադատության նախարար
______________ Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«13» մարտի 2015թ. N 06-Ն

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՐԱՑՎՈՂ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սննդամթերքի անվտանգության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15.1-ին հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 958-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 16-րդ կետի 1-ին ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող դիտարկման ընթացքում լրացվող դիտարկման թերթիկի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ԼՂՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության պետի
2015 թվականի մարտի 13-ի
N 06-Ն հրամանի
Ձև

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# Դ Ի Տ Ա Ր Կ Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

«____» _______________ 201 թ. ք. Ստեփանակերտ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի

______________________________________________________________________

(դիտարկում իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

մասնակցությամբ ______________________________________________________

(տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի տվյալները)

______________________________________________________________________

(դիտարկման այլ մասնակիցների տվյալները)

______________________________________________________________________

(դիտարկում կատարելու վայրը (տնտեսավարող սուբյեկտի փաստացի գործունեության վայրը))

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի «_____»_____________ 20___թ. թիվ ___-Ա հրամանի հիման վրա իրականացվեց դիտարկում:

3. Դիտարկվող հարցերի շրջանակը.

| Հ/Հ | Շուկայահանված սննդամթերքին, սննդամթերքի հետ շփվող նյութերին, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումներին ներկայացված պահանջներ | | Այո | Ոչ | Կիրառելի չէ | Լրացուցիչ նշումներ (նշել անհամապատասխանության էությունը և արտադրանքը նկարագրող այլ տեղեկություններ՝ անվանումը, արտադրողը, քանակը, քաշը և այլն) | Իրավական հիմքը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Իրացվող սննդամթերքի մակնշման անհամապա-տասխանություն | Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ում արտադրված | | | | | «Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենք հոդված 8 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Լեռնային Ղարաբաղի Հանրապետու-թյունում իրացվող սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջներին | սննդամթերքի համար | | | | | |
| | | Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի համար | | | | | ԼՂՀ կառավարության 2007 թվականի հունիսի 26-ի N 263 որոշում |
| 2 | Վաճառվում է այնպիսի սննդամթերք, որի<br>ա) պիտանիության ժամկետն անցած է.<br>բ) փաթեթավորման կամ տարայի վրա պիտանիության ժամկետը բացակայում է կամ ընթեռնելի չէ<br>գ)ժամկետը կրկնակի մակնշված է, կամ արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված է, և նշված է պիտանիության նոր ժամկետ<br>դ) սննդամթերքի հայերեն մակնշումը չի փակցվել արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա | | | | | | «Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենք հոդված 8 մաս 9.1 և 9.2 |
| 3 | Վնասված փաթեթավորումով և մակնշումով սննդամթերքի իրացում | | | | | | «Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենք հոդված 8 մաս 9 |
| 4 | Սննդամթերքի իրացում անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթերի բացակայությամբ և հետազծելիության հնարավորությունը չապահովելով | | | | | | «Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենք հոդված 9 մաս 1 |
| 5 | Կենդանական ծագման մթերքի իրացում առանց պարտադիր անասնաբուժասանիտարական փորձաքննության | | | | | | «Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենք հոդված 9 |
| 6 | Առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը չի կատարվում ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում | | | | | | «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենք հոդված 4 մաս 2 |
| 7 | Առևտրի օբյեկտն ապահովված չէ ապրանքների վաճառքը կազմակերպելու համար օրենսդրությանը համապատասխան ընդունման, պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, պահեստային, վարչակենցաղային, ապրանքների վաճառքի նախապատրաստման համար անհրաժեշտ շենքերով | | | | | | «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենք հոդված 4 մաս 3 |
| 8 | Գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպիչը վաճառքի ընդունվող՝ փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով չի ապահովել գյուղատնտեսական արտադրանքի շուկայում համապատասխան | | | | | | «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենք հոդված 7 մաս 2 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | սարքավորումներով հագեցված լաբորատորիա | | | | | |
| 9 | Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջդիր պիտակների վրա նշված չեն ապրանքի անվանումը, տեսակը, քաշը (նետտո) մեկ կիլոգրամի և կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, նաև պիտանիության ժամկետը | | | | | «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենք հոդված 9 մաս 7 |
| 10 | Սննդի շղթայում ներգրավված անձնակազմը ենթարկված չէ նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննությունների կամ չունեն սանիտարական գրքույկ | | | | | ԼՂՀ կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի N 396-Ն որոշում |
| 11 | Իրացվող սննդամթերք, որում հնարավոր է ախտածին մանրէների բազմացում կամ թունավոր նյութերի առաջացում, չի պահվում դրանց առաջացումը կամ բազմացումը բացառող ջերմաստիճանում | | | | | ԼՂՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն որոշում |

4. Դիտարկման ընթացքում հայտնաբերվեց նաև ______________________________

______________________________________________________________________

(իրացումը կամ վաճառքը կասեցված կամ արգելված, ինչպես նաև նմուշառված սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների անվանումը, արտադրողը, քանակը (քաշը), կասեցման կամ արգելման կարգադրագրի տարին, ամիսը,ամսաթիվը և համարը)

5. Հայտնաբերված անհամապատասխանությունների վերացմանն ուղղված առաջադրանքներ՝ ըստ կատարման վերջնաժամկետի.

1) ____________________________________________________________________

2) ____________________________________________________________________

3) ____________________________________________________________________

6. Տնտեսավարող սուբյեկտի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի բացատրությունը կամ նշում՝ բացատրություն տալուց հրաժարվելու մասին.

______________________________________________________________________

______________________________________________________________________

7. Դիտարկում իրականացրած պաշտոնատար անձ՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի

______________________________________________________________________

(դիտարկում իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

______________________

(ստորագրությունը)

8. Տնտեսավարող սուբյեկտի ղեկավար (փոխարինող պաշտոնատար անձ)՝

______________________________________________________________________

(պաշտոնը, անունը, ազգանունը)

______________________

(ստորագրությունը)

9. Դիտարկման թերթիկը կազմված է երկու օրինակից:

10. Ստացա դիտարկման թերթիկի մեկ օրինակը`

______________________________________________

(պաշտոնը, անունը, ազգանունը)

______________________________

(ստորագրությունը)

______________________________________________

(նշում դիտարկման թերթիկը ստորագրելուց կամ ստանալուց հրաժարվելու մասին)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՄԵՅՐԱՆՅԱՆ